ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ԳՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

(Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ)

ԻՄ ԷԼ ԽՈՍՔԸ

Շատերը խոսեցին, շատերը գրեցին, ես էլ ասում եմ իմ սրտի խոսքը Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի վշտալի մահվան առթիվ։

Մենք, լեզվաբանական գիտության համեստ հետևորդներս, ստեղծագործական լայն ուղու վրա կանգնեցինք այն օրից, երբ գիտության կորիֆեյ հանճարեղ Ստալինը ջախջախեց մառական սխոլաստիկան և գիտական նոր լեզվաբանությունը գիտության գահի վրա դրավ։ Ամենքս էլ երախտապարտ ենք իրեն։ Ես իմ երախտագիտական պարտքս հատուցանելու դիտումով, իմ կյանքի յոթանասուն յոթը տարիների պտուղը՝ Լիակատար Քերականությունը ձոնեցի իրեն։ Անշուշտ այս համեստ ձոնս ոչ մի ճառագայթ չպիտի ավելացներ իր անվան, բայց իր անվան հիշատակությունը դափնյա պսակ պիտի լինի իմ գրքի 12 հատորների ճակատին, իբրև անջնջելի հիշատակ իմ երախտագիտական զգացմունքների։

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

(Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ)

ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՄԵԶ ՀԵՏ Է

Մեր մեծ և հանճարեղ ընկեր Ստալինի կորուստը ամբողջ Սովետական Միությանը, ամբողջ աշխարհի աշխատավոր և պրոգրեսիվ մարդկությանը ձգեց խոր վշտի մեջ։

Ոչ միայն չես կարող հաշտվել զարհուրելի փաստի հետ, այլ նույնիսկ չես կարող հասկանալ, ըմբռնել այն, որ մեզանից ընդմիշտ հեռանում է նա, ով տարիների ընթացքում ապրել է մեր մտքերի ու երազանքների մեջ։ Ստալինը ամենահեղինակավոր անձն է բովանդակ աշխարհում, ամենապանծալի և ներշնչող անունը, որ հնչում է երկրագնդի բոլոր մասերում, ուր շահագործում կա և ստրկացում, ուր պայքար կա ընդդեմ բռնության, շահագործման, ստրկացման։

Ստալինը համաշխարհային պատմության սակավաթիվ մեծություններից մեկն է՝ մարդկության հետ հարատևող։ Նա ինքը, մեծ Լենինի հետ, ստեղծեց մի նոր պատմություն, մի նոր աշխարհ, մարդկային արդար փոխհարաբերությունների երազած աշխարհը։

Այսպիսի մեծություններին երբեք մահ չկա։ Մահը Ստալինի էության հետ երբեք համատեղելի չէ։ Ստալինը անմահ է Լենինի պես, Ստալինը անմահ է Լենինի հետ։

Նա Լենինի հետ ստեղծեց Կոմունիստական պարտիան, դաստիարակեց և կոփեց նրան։ Նա Լենինի հետ ղեկավարեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան, մի անանախընթաց ռևոլուցիա, որ ամբողջ աշխարհն